ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Կ. Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայ մամուլի ընդհանուր պատմության մեջ ֆրանսահայ մամուլը գրավում է համեմատաբար կարևոր տեղ ինչպես անունների թվով (ավելի քան 200), այնպես էլ իր դերով ու գործունեությամբ։ Այն գրավում է երրորդ տեղը Կոստանդնուպոլսից և Թիֆլիսից՝ համապատասխանաբար Օսմանյան կայսրության և կովկասահայության այս երկու խոշոր կենտրոններից անմիջապես հետո և զիջել է Երևանին միայն այն ժամանակ, երբ վերջինս դարձել է հարություն առած հայկական պետության մայրաքաղաքը։ Այդ տեղը առնչություն չունի Ֆրանսիայի գաղթօջախի թվաքանակի հետ՝ հավանաբար, գրեթե 1000 (վաճառականներ, հոգևորականներ) XIX դ. սկզբներին, 4000՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին (ուսանողներ, գրողներ, վտարանդի քաղաքական գործիչներ), 60.000-ից 100.000՝ երկու աշխարհամարտերի միջև, երբ ուժեղանում է 1915 թ. եղեռնից մազապուրծ փախստականների հոսքը, իսկ այսօր, թերևս, 250-ից 300.000, նկատի ունենալով բնական աճը և ներհոսի զանազան ալիքները, որպես հետևանք 1945-ից Մերձավոր արևելքում պարբերաբար բռնկվող ճգնաժամերի և ԽՍՀՄ-ից արտագաղթի։

XIX դ. երկրորդ քառորդից Փարիզը դառնում է հայ ժողովրդի մշակութային ու քաղաքական վերածննդի շարժման կենտրոններից մեկը։

Ֆրանսիական համալսարաններ ուսանելու եկած ուսանողներն արդեն գիտեին ֆրանսերեն, գալիս էին խմբերով՝ ավագի խնամակալությամբ, նպատակ ունենալով հաղորդակցվել Արևմուտքի գիտությանն ու տեխնիկային։ Միաժամանակ, նրանք ներքաշվելու էին հեղափոխական եռքի բարձրակետին հասած դարաշրջանի քաղաքական հորձանքների մեջ։ Առաջին խումբը ժամանում է 1839-ին՝ Հաթթը շերիֆի հրապարակման տարին, որով Օսմանյան կայսրությունում սկսվում էր Թանզիմաթի դարաշրջանը։ Երկրորդ, ավելի հոծ խումբը գալիս է 1848-ին, Ֆրանսիական հեղափոխության և Եվրոպայի «ժողովուրդների գարնան» տարին, երրորդը՝ 1856-ին։ Հենց այս շրջանում է, որ Փարիզում բացվում են հայկական տպարանը (պատկանում էր Ճանիկ Արամյանին, որի անունն է կրում գեղեցիկ ոճավորված հայկական տառատեսակներից մեկը), Մխիթարյան հայրերի Մուրատյան վարժարանը (1846), Արարատյան ընկերությունը (որը նպատակ ուներ հայ ժողովրդին դուրս բերել առաջադիմության և արևմտացման ուղի) և առաջին մատուռը։ Օսմանյան կայսրությունից Ֆրանսիա եկած այս ուսանողները կազմում են աշխարհիկ մտավորականության առաջին սերունդը։

Փարիզում հրատարակված առաջին պարբերականը՝ «Մասյաց աղավնին» (1855—58), հիմնել է հայր Գ. Այվազովսկին։ Դա երկլեզու, հայերեն-ֆրանսերեն գեղեցիկ պատկերազարդ ամսագիր էր, որի նպատակն էր զարկ տալ ժողովրդի մշակութային, գիտական և բարոյական կրթությանը։ Հանդեսը զետեղում էր գիտահանրամատչելի հոդվածներ՝ ֆրանսիական հանրագիտարանի նմանակությամբ, չափածո գործեր, փարիզյան կյանքի անցուդարձին վերաբերող նյութեր, բայց առանց քաղաքական եզրահանգումների. այդ պատճառով խորհրդային պատմաբանները այն համարել են «պահպանողական» հոսանքի խոսնակ, ի տարբերություն մյուս երկու «առաջադիմական» հանդեսների, որ նույն ժամանակաշրջանում հրատարակում էր Ստեփան Ոսկանյանը (1825—1901)։ Օգյուստ Կոնտի և Միշլեի այդ երբեմնի աշակերտը, Բերանժեի երկրպագուն, մարտնչել էր 1848-ի բարիկադների վրա, հարել ֆրանկմասոնությանը։ «Արևելքում» (1855—56), այնուհետև «Արևմուտքում» (1859,

1864—1865), որն ունի «Արձագանք Եվրոպայի լուսավորության» ծրագրային ենթավերնագիրը, Ստեփան Ոսկանյանը ձգտում է տարածել տնտեսական և սոցիալական առաջադիմության գաղափարներ, ազատատենչ խղճեր։ Դա երևում է պատմությանը, ազգագրությանը, արվեստին, երկրագործությանը, քաղաքական, սոցիալական ու տնտեսական խնդիրներին առնչվող հոդվածներից, ինչպես նաև գրական-քննադատական և թարգմանական հրապարակումներից։ Թարգմանվում էին եվրոպական, հատկապես ֆրանսիական հեղինակներ. Կոռնել, Լաֆոնտեն, Ֆլորիան, Լամենե, Ռուսո, Շատոբրիան, Լաշամբոդի, Դյումա-որդի, Էժեն Սյու, Բերանժե, Միցկևիչ, Լոկ և ուրիշներ։

Սկսած 1880-ական թվականներից, երբ «Արևելյան հարցի» բաղկացուցիչ մասը դարձած Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսի (1878) վավերացմամբ դուրս եկավ միջազգային ասպարեզ, լուսավորության դարի փիլիսոփայությամբ և արևմտյան լիբերալիզմով ներշնչված մտավորականության առաջին սերունդը հետզհետե դիրքերը զիջեց ավելի հեղափոխական սերնդի, որը, տեսնելով բարեփոխումների ձախողումը, դարձավ արմատական և համակվեց սոցիալիստական ու մարքսիստական հոսանքների գաղափարներով։ Երևան են գալիս հայ քաղաքական կուսակցությունները։ Այդ կուսակցությունները, որոնց առաջնահերթ խնդիրն էր հայերի պաշտպանությունը և տարածումը «երկրում», որի հիմնական մասը գտնվում էր Օսմանյան կայսրության մեջ, ընդհատակյա էին, իսկ նրանց ղեկավարները շուտով ստիպված են լինում դառնալ վտարանդի, ապաստանելով, մասնավորապես, Ֆրանսիայում։

Այսպես, Արմենական կուսակցության հիմնադիր Մկրտիչ Փորթուգալյանը (1848—1921) 1885 թ. հաստատվեց Մարսելում, որտեղ մինչև իր մահը հրապարակում էր «Արմենիա» ազգային և քաղաքական շաբաթաթերթը։ Շաբաթաթերթը Օսմանյան կայսրությունում և Կովկասում տարածում էր այն գաղափարը, թե Հայաստանի ազատագրությունը պիտի ձեռք բերվի բուլղարական անկախության նվաճման եղանակով, շնորհիվ ֆիդայիների զինված պայքարի։ Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը 1891-ից 1914-ը ոչ առանց ընդհատումների Փարիզում հրատարակում է իր «Հնչակ» պաշտոնաթերթը (1891—92, 1894—96, 1904—1914)։ Հ Հ. դաշնակցության պաշտոնաթերթ «Դրոշակը» 1891—1914 թթ. հրատարակվում է Ժնևում, իսկ սկսած 1900 թ. այդ կուսակցությունը ֆինանսավորում է «Պրո Արմենիա» ֆրանսերեն լեզվով երկշաբաթյա պարբերականի հրատարակությունը Փարիզում (1900—1908)։ Հրատարակությունը վերսկսվում է «Հանուն Արևելքի ժողովուրդների» (1912—1914) անվան տակ։ Նրա նպատակն էր շահել ֆրանսիական հասարակական կարծիքի համակրանքը ի նպաստ Հայկական հարցի։

«Պրո Արմենիայի» խմբագրական կոլեգիայի կազմում էին Ժ. Կլեմանսոն, Ա. Ֆրանսը, Ժ. Ժորեսը, Ֆ. դը Պրեսանսեն։ Խմբագրության քարտուղարն էր Ժան Լոնգեն, գլխավոր խմբագիրը և հանդեսի հիրավի բանող անիվը՝ Պիեռ Կիյարը (1864—1912)[1]։ Ծագումով բուրգունդցի այդ մարդը՝ առաջին դրեյֆուսականներից մեկը, Մարդու իրավունքների լիգայի փոխնախագահ, այնուհետև գլխավոր քարտուղար, հնագետ ու բանաստեղծ, Հայաստանով սկսել է հետաքրքրվել 1893 թ., երբ հրավիրվում է Կոստանդնուպոլիս՝ որպես ուսուցիչ աշխատելու կաթոլիկական վարժարանում։ Այստեղ նա ականատես է դառնում 1895—96 թթ. ջարդերին (200—300.000 զոհ), որոնց նկարագրությամբ հանդես է գալիս «Ռըվյու դը Պարի» և «Մերկյուր դը Ֆրանս» պարբերականներում՝ Մորիս Լը Վեյր ծածկանվամբ։ Շուտով նա հարկադրված վերադառնում է Ֆրանսիա և ամբողջովին նվիրվում հայերի պաշտպա-

[1] Տե՛ս Agnes Vahramian հուշագրությունը "Aspects du mouvement arménophile arménien: Pierre Quillard et Pro Armenia", IEP Grenoble, 1978, որից մենք շատ ենք օգտվել թեմայի վերլուծության ժամանակ։

նության գործին։ Միանգամայն բնական է, որ «Պրո Արմենիան» ծրագրելիս Դաշնակցությունը պետք է դիմեր նրա աջակցությանը։ Թերթը տալիս է դեպքերի շարադրությունն ու քաղաքական վերլուծությունը, որոնք ուշադրություն են սևեռում սարսափելի ջարդերի, տերությունների մեղսակից լռության, սուլթանի կամ ցարի բռնակալության, հայերի պահանջների արդարացիության վրա։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին թերթը գնալով ավելի մեծ տեղ է հատկացնում բռնակալության դեմ պայքարող ուրիշ ժողովուրդներին (մակեդոնացիներ, բուլղարներ, ալբանացիներ, քրդեր)։ Պահանջները չափավոր են. վերջ տալ ջարդերին, անցկացնել միջազգային պայմանագրերով նախատեսված բարեփոխումները, հաստատել ֆեդերալիզմ։ Դրանք արտացոլում են հայ սոցիալիստական շարժման ժորեսյան կոնցեպցիան, ֆրանսիական սոցիալիզմի քրիստոնեական զգացմունքայնությունը, ինչպես նաև արևմտակենտրոնությունը։ Թերթի հրատարակումը դադարում է 1908 թ., երիտթուրքերի այնքան հույս ներշնչած հեղաշրջման ժամանակ, որպեսզի վերսկսվի 1912 թ.՝ վտանգների աճին զուգահեռ (բալկանյան պատերազմներ, երիտթուրքերի կոմիտեի դիկտատուրա, ռուս դիվանագիտության շահարկությունը Հայկական հարցում և 1914—1918 թթ. պատերազմի բոլոր մյուս կանխանշանները)։ «Պրո Արմենիան» հաջողված փորձ է հայանպաստ շարժում ստեղծելու տեսակետից։ Դա ժողովուրդների հետ «բարեկամության» հանդեսի նախատիպ է։ Հայկական հարցը արծարծվում է յուրաքանչյուր առիթով. Սոցիալիստական ինտերնացիոնալի (ուր Դաշնակցության կուսակցությունը ընդունվել էր 1907 թ.) համագումարի օրերին և պառլամենտում։ «Պրո Արմենիայի» նախաձեռնությամբ կազմակերպվում են բազմաթիվ հայանպաստ ժողովներ ու միտինգներ, բանավեճեր ու կոնֆերանսներ։ Բայց պետության քաղաքականության վրա ներազդելու տեսակետից թերթը անհաջողության է մատնվում։

Նույն ժամանակաշրջանի հայ գրական մամուլը ներկայացնում է Հայ դատի պաշտպանության մեկ այլ կոնցեպցիա, որն ավելի պահպանողական էր և նպատակ ուներ հայասիրությանը զարկ տալ մշակութային մերձեցման շնորհիվ։ Այս հոսանքի գլխավոր ներկայացուցիչը Արշակ Չոպանյանն է (1872—1954), որը 1895 թ. համիդյան ջարդերի սկզբում ապաստան գտնելով Փարիզում, ծավալում է գրական բուռն գործունեություն որպես բանաստեղծ, քննադատ, երկլեզու գրող և անխոնջ թարգմանիչ (Հյուգոյից, Բալզակից, Զոլայից, Վերհառնից և ուրիշներից)՝ ոգեշնչված ֆրանսիական և հայկական մշակույթներով և այդ մշակույթների ներթափանցմամբ։ Նա կայուն կապեր է հաստատում բազմաթիվ գրողների, արվեստագետների և քաղաքագետների հետ, որպիսիք էին Ա. Ֆրանսը, Շ. Պեգին, Ռ. Ռոլանը, Միստրալը, Պ. Կիյարը, Վ. Բերարը, Ժ. Կլեմանսոն, Պ. Դեշանելը, Ժ. դը Մորգանը, Ռընե Գրուսեն և ուրիշներ։ Նրա «Անահիտ» ամսագիրը առանց ընդհատվելու լույս է տեսնում 1898-ից 1911-ը (այնուհետև 1929-ից 1940-ը և 1946—1949-ը)։ Ա. Չոպանյանը հակադրվում է հեղափոխական շարժմանը, կարծելով, որ հայերը չունեն իրենց նպատակներին հասնելու միջոցներ և հեղափոխական պայքարի դիմելով՝ կարող են կանգնել մեծ աղետի առաջ, մի բան, որ համապատասխանում է լիբերալ բուրժուազիայի ըմբռնումներին։

Այսպիսով, 1855—1914 թվականներին, որոնց ընթացքում Ֆրանսիայում հրատարակվում է 27 անուն հայ պարբերական, հայ մտավորականության, հատկապես, Օսմանյան կայսրության հատվածի համար այդ երկիրը դառնում է համալսարան ու ապաստան, իսկ հետո նաև ազգային ազատագրության պահանջի ամբիոն։ Մեծ պատերազմը փշրելու էր այդ հույսը։

1915 թ. երիտթուրքերի կառավարության կազմակերպած ցեղասպանությունից մազապուրծ 700-ից 900 հազար գաղթականներ ապաստանում են Անդրկովկասում, Բալկաններում, արաբական Մերձավոր արևելքում և Իրանում։ Պողոս Նուբար փաշայի գլխավորած լիբերալ հոսանքը ներկայացնող հայկական պատվիրակությանը Փարիզում հաջողվում է ստեղծել հայ կամա-

վորների ջոկատ՝ Արևելյան լեգեոն, Հայկական Կիլիկիայի ծրագիրը իրակա-նացնելու նպատակով մի ազդեցության ոլորտում, որն ըստ Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի, վերապահված էր Ֆրանսիային։ 1916 թ. ամռանը հիմնված «Արձագանք Փարիզի» երկամսյա հանդեսը (1916—1920) արտա-ցոլում է այս կողմնորոշումը, որը հայերի բախտը կապում է Արևելքում Ֆրանսիայի քաղաքականության հետ։ Նույնը վերաբերում է Արշակ Չոպան-յանի «Վերածնունդ» (1917—1921) հանդեսին, որի առաջին համարը խոր-հրրգանշորեն լույս է տեսնում 1917 թ. հուլիսի 14-ին։ Այս հանդեսները նկարագրում են հայանպաստ շարժումը, փարիզահայ համայնքի կյանքը, ռազմական իրավիճակը, հայերի մասնակցությունը պատերազմին։ Ցարական կայսրության «բալկանիզացիան» Կովկասում, որը ռուսների պարտություն-ների և ռուսական հեղափոխությունների հետևանք էր, 1918 թ. մայիսին հան-գեցնում է Հայաստանի անկախ հանրապետության հռչակմանը։ Եվ սակայն. 1919 թ. Փարիզում կայացած Հաշտության կոնֆերանսին հայերին տեղ չի տրվում, և նրանց մնում է միայն օգտագործել ֆրանսիական և ամերիկյան հասարակական կարծիքի համակրանքի դրամագլուխը՝ հիշեցնելով իրենց տված զոհերին և հավատարմությունը՝ դաշնակիցների գործին։ Այս տեսա-կետից բավականին հատկանշական է ֆրանսիական բանակի հայ կամավոր-ների երկլեզու օրգան «Խթանը» (1915—1935)։

Շուտով քեմալական շարժման ու բոլշևիկյան հեղափոխության կրկնակի ճնշման տակ և ֆրանս-բրիտանական հակասությունների, Կովկասում և Արև-վելքում ունեցած պարտավորություններից նրանց հրաժարվելու պատճառով Հայկական հանրապետությունը խորհրդայնացվում է (1920 թ. դեկտեմբե-րին), մինչդեռ Ֆրանսիան 1921 թ. փետրվարին հեռանում է Կիլիկիայից, չհաշված Ալեքսանդրեթի սանջակը, որը 1939 թ. տրվելու էր Թուրքիային։ Լոզանի պայմանագիրը (1923 թ. հուլիս) չեղյալ է համարում 1920 թ. օգոս-տոսին կնքած Սևրի պայմանագիրը՝ ճանաչելով նոր Թուրքիան ի վնաս հպա-տակ փոքրամասնությունների։

Առաջին և երկրորդ աշխարհամարտերի միջև հրատարակված հայ մա-մուլը արտացոլում է հայերի նոր իրավիճակին հարմարեցված ազգային գո-յապահպանման համայնքային կառուցվածքների հետևողական կազմավորու-մը, միաժամանակ մասնակցելով այդ կազմավորմանը և լինելով հայ հասա-րակական կառուցվածքի բաղադրիչ մասը։

1919 թ. և 1939 թ. միջև Ֆրանսիայում հաշվվում է 120 անուն պարբե-րական, որոնցից 87-ը՝ Փարիզում, 21-ը՝ Մարսելում, 9-ը՝ Լիոնում, հայերի կենտրոնացման երեք գլխավոր վայրերում։ Ինչպիսին էլ լիներ մամուլի բնույ-թը (կուսակցական, գրական, հասարակական, գիտական և այլն) և միտումը, այն արտացոլում է Խորհրդային Հայաստանի իրադարձությունները և կյանքի ելևէջները։ Մամուլն անդրադառնում է հյուրընկալ երկրում և աշխարհում կատարվող իրադարձություններին։ Վերջապես, փորձում է ստեղծել հայ հա-սարակական, քաղաքական ու մշակութային յուրահատուկ կյանք։ «Հառաջ» օրաթերթը սրա լավագույն օրինակն է։ Այն ստեղծվել է Փարիզում, 1925 թ. օգոստոսին։ Անունը հիշեցնում է գերմանական սոցիալիստական "Vorwäts" օրաթերթը։ Լրագիրը սկզբում լույս է տեսնում շաբաթը երեք անգամ, մինչև որ 1927 թ. հունվարից սկսած դառնում է ամենօրյա։ «Հառաջը» դեռևս պահ-պանում է իր գոյությունը. հիմնադրի՝ Շավարշ Միսակյանի մահից հետո տնօրեն է դառնում նրա դուստր Արփիկը։

Շավարշ Միսակյանը (1884—1957) 16 տարեկանից սկսում է հրապա-րակախոսի և դաշնակցական մարտնչողի փայլուն կարիերան, աշխատակցե-լով Կոստանդնուպոլսի կուսակցական գլխավոր թերթերին։ 1911 թ. էրզրու-մում նա ստանձնում է Հայկական բարձրավանդակում գտնվող այդ քաղաքի «Հառաջ» թերթի խմբագրի պաշտոնը, այցելում է «Երկիր», հետո մերադառ-նում է Կոստանդնուպոլիս։ 1915 թ. ապրիլի 24-ին նա խուսափում է ձերբա-կալությունից, որին ենթարկվեցին հայ մտավորականությունն ու բարձրաս-

տիճան անձինք, որոշ ժամանակ կարողանում է Բուլղարիայի վրայով տեղեկություններ հասցնել իրադարձությունների մասին, ի վերջո ձերբակալվում է, խոշտանգվում, դատապարտվում ռազմական ատյանի կողմից, բայց փրկվում է զինադադարի շնորհիվ։ Նա վերսկսում է քաղաքական մարտիկի և խմբագրի գործունեությունը։ 1922 թ. նոյեմբերին, երբ Քեմալը մտնում է Կոստանդնուպոլիս, նա մեկնում է Սոֆիա, իսկ 1924 թ.՝ Ֆրանսիա։

«Հառաջի» առաջին համարում Շ. Միսակյանը բնութագրում է իր լրագրի ծրագիրը, որը, կարելի է ասել, հետևողականորեն կենսագործվում է մինչև մեր օրերը։ Նկատի ունենալով Ֆրանսիայում հայ համայնքի գոյությունը, որը եղեռնից հետո Եվրոպայում կազմավորվող ամենանոր, բայց և ամենաստվար համայնքն էր, Շ. Միսակյանը եզրակացնում է, թե անհրաժեշտ է ունենալ այնպիսի մամուլ, որը մասնակցի այդ կազմավորմանը, ձգտելով անաղարտ պահել հայրենիքի գաղափարը, պահպանել ու ամրապնդել ազգային գիտակցությունը, աշխուժացնել լեզուն, զարգացնել հայ մշակույթը և արդիականացնել հասարակությունը, սպասելով ազատագրված հայրենիք վերադառնալու օրվան, որովհետև վտարանդի կյանքը ժամանակավոր երևույթ է։ Մինչ այդ անհրաժեշտ է օգտվել այդ կյանքի ընձեռած դրական կողմերից։ «Հառաջը» այսպիսով հանձն է առնում ոչ միայն տեղեկություններ հաղորդել, այլև կազմակերպել ու դաստիարակել ֆրանսիական համայնքը՝ վերադարձի հեռանկարով։ Օրաթերթը մտադրվում է նաև մասնակցել հայրենիքի ազատագրության և հայ ժողովրդի իրավունքների ճանաչման պայքարին (միաժամանակ խորհրդային կարգերի և Նոր Թուրքիայի՝ Օսմանյան կայսրությունից ցեղասպանության պատասխանատվությունը ժառանգած պետության դեմ)։ «Հառաջը» տեղեկություններ է տալիս տարբեր համայնքների և, իհարկե, ավելի մանրամասնորեն ֆրանսահայ համայնքի վերաբերյալ, Խորհրդային Հայաստանի և հայերի ճակատագրին առնչվող երկրների մասին (Թուրքիա, ԽՍՀՄ, Իրան), աշխարհի մասին (ֆրանսիական և միջազգային լուրեր)։ Խմբագրականներում վերլուծվում են հրատապ խնդիրներ կամ պատմական իրադարձություններ՝ առնչված Հայկական հարցին։ Լուրջ հոդվածներ են նվիրվում նաև պատմությանը, գրականությանը, արվեստին, իրավունքին և այլն... Մամուլի տեսության մեջ առանձնացվում են օտար պարբերականներում հայերին առնչվող հիշատակությունները։ Շարունակելով XIX դ. պարբերականների ավանդույթը՝ լրագիրը ընթերցողին է ներկայացնում հայ և համաշխարհային դասական գրականության նմուշներ, հուշեր կամ անտիպ էջեր։ Օրաթերթի վերջին՝ չորրորդ էջը զետեղում է հայտարարություններ, ծանուցումներ, համայնքի կյանքին վերաբերող լուրեր։ «Փնտրում են հարազատներին» բաժինը, որը թեև լույս է տեսնում նվազ հաճախականությամբ, բայց մինչ օրս պահպանվել է, ձգտում է վերամիավորել ջարդերի ու տեղահանության հետևանքով իրար կորցրած ընտանիքները։ Սկսած 1976 թ. հունվարից «Հառաջը» լույս է ընծայում նաև «Միտք և արվեստ» միամսյա հավելվածը։

Հավատարմություն հռչակելով դաշնակցական ոգուն, հատկապես իր հիմնադրի օրոք, «Հառաջը» երբեք չի եղել կուսակցության պաշտոնաթերթ և միշտ պահպանել է ազատ կարծիք ունեցող լրագրի անկախ դիրքորոշումը։ Օրաթերթին աշխատակցող մյուս մտավորականների հետ մեկտեղ Շ. Միսակյանը նախաձեռնել կամ աշխատակցել է գրական, պատմական և այլ բնույթի ուրիշ պարբերականներին, որոնք լույս են տեսել «Հառաջի» տպարանում[2]։

Կոմունիստական մամուլը սկզբից ևեթ հանդես է գալիս որպես անմիջականորեն Ֆրանսիայի կոմկուսին կամ կոմինտերնին ենթակա, թեև դա ոչ այնքան համաշխարհային հեղափոխության գաղափարին, որքան Խորհրդային Հայաստանին կապված լինելու արդյունք էր։ Կարելի է առանձնացնել

2 Շ. Միսակյանի կենսագրությանը և «Հառաջին» ծանոթանալու համար, բացի օրաթերթի ուսումնասիրությունից, կարելի է ընթերցել թերթի հրատարակած մի շարք հուշ-ժողովածուներ, ինչպիսիք են «Օրեր և ժամեր», Փարիզ, 1958, «Հառաջ-50», 1976 և «Հառաջ-60», 1986։

անունների երկու մեծ շարք։ Նախ և առաջ կային Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության և Կոմինտերնի ֆրանսիական մասնաճյուղի հայախոս խմբերի քիչ թե շատ վաղանցիկ պաշտոնաթերթեր, ինչպիսիք էին «Հայ բանվորը» (Փարիզ, 1924), «Բանվոր Փարիզին» (Փարիզ, 1924—25), «Վերելքը» (Փարիզ, 1925—26), «Բանվորը» (Փարիզ, 1928—29), որոնք հայերենով տարածում էին մարքսիզմը, կուսակցության և Կոմինտերնի թեզերն ու հրահանգները, զետեղում սփյուռքահայության իրավիճակին, ազգային հարցին, «դաշնակ թշնամիներին», խորհրդային Հայաստանին վերաբերող հոդվածներ։ Պարբերականների մյուս խումբը կազմված է կոմունիստամետ և խորհրդամետ թերթերից, որոնք նախորդների նման բացահայտորեն մարտնչող չէին։ Դրանք քաղաքական և գրական հանդեսներ էին, ինչպես «Երևանը» (Փարիզ, 1926—30), «Մեր ուղին» (Փարիզ, 1931), «Դարբնոցը» (Փարիզ, 1932), «Արշավը» (Փարիզ, 1932), որոնք իրար են հաջորդում Երևանից ուղարկված հայ կոմինտերնականների ղեկավարությամբ։ Սկսած 1930-ական թվականներից խմբագիրներ հավաքագրվում էին Եղեռնից փրկված որբերի սերնդից, որոնց կոմունիզմի գիրկն էր բերել 1929 թ. ճգնաժամը, որն առաջին հերթին հարվածել էր այդ «օտարականներին»։ Այդպես եղավ Միսաք Մանուշյանի հետ (1906—1943)։ Ընկնելով Սիրիայի որբանոցներից մեկը, նա 1925 թ. գալիս է Ֆրանսիա՝ իր միակ ողջ մնացած եղբոր հետ, որի մահը 1927 թ. խորապես վշտացնում է նրան և նախորդում գործազրկության՝ 1929 թ. ճգնաժամի օրերին։ Նա ինքնուս էր և որպես ազատ ունկնդիր, հաճախում էր Սորբոնի դասընթացներին, լինում Մոնպառնասի և Լատինական թաղամասի նկարիչների ու քանդակագործների շրջանում, բնորդությամբ ապրուստ հայթայթում[3]։ Նրան կոմկուս է բերում 1921 թ. Երևանում ստեղծված ՀՕԿ-ը («Հայ օգնության կոմիտե»), որը մասնաճյուղեր ուներ սփյուռքահայ բոլոր համայնքներում։ Այդ մասնաճյուղերը մարդասիրական օգնության և մշակութային կապերի քողի տակ դարձել էին խորհրդային պրոպագանդի հիմնարկներ։

Մ. Մանուշյանը շուտով դառնում է կուսակցական աշխատող։ Սկզբում աշխատակցում է Կոմիտեի «ՀՕԿ» հանդեսին (Փարիզ, 1933—35), այնուհետև հիմնում մի քանի պարբերական, այդ թվում գրական հանդեսներ՝ «Ջանք» (Փարիզ, 1930—31), «Մշակույթ» (Փարիզ, 1935—37) և քաղաքական շաբաթաթերթ «Զանգու» (Փարիզ, 1935—37)։ Այս վերջինում նա հետևում է ստալինյան գծին՝ ողջունելով «ժողովրդի թշնամիների» դատավարությունները և քննադատելով «բուրժուա-նացիոնալիստ» դաշնակցականներին, հատկապես, անկախության հուշերը վառ պահելու և 1915 թ. չմոռանալու համար, որ իբր «բորբոքում է ռասսայական թշնամանք»։ Լինելով թարգմանիչ և բանաստեղծ՝ Մանուշյանը շփվում է հայ գրողների, մասնավորապես, Արշակ Չոպանյանի հետ, որոնք դարձել էին «ուղեկիցներ»՝ հիմնականում հայրենասիրական նկատառումներով։ Մասնակցում է նաև Ֆրանսիայի քաղաքական կյանքին։ 1941 թ. հունիսին նա կալանվում է Կոմպիենի ճամբարում, որտեղից փախչում է, մտնում Դիմադրության շարժման մեջ և շուտով դառնում «Ազատ հրաձիգների և պարտիզանների» կազմակերպության Փարիզի շրջանի ներգաղթած անդամների պատասխանատու։ 1943 թ. նոյեմբերի 16-ին ձերբակալվում է, հավանաբար, մատնության հետևանքով։ 1944 թ. փետրվարի 24-ին նրան գնդակահարում են Մոն Վալերիենում՝ Դիմադրության մոտ 20 օտարազգի մասնակիցների հետ, որոնք հայտնի էին դարձել «կարմիր պլակատի» շնորհիվ։ Ինչպես «Զանգուում», այնպես էլ պրոկոմունիստական շարժման մյուս լրագրերում՝ «Կայծեր» (Լիոն, 1933—34), «Հայրենատեն» (Փարիզ, 1935), «Մեր երկիր» (Փարիզ) տպագրվում են հոդվածներ ԽՍՀՄ-ի և խորհրդային Հայաստանի, Սփյուռքի, միջազգային դրության, արվեստի,

[3] Տե՛ս Մելինե Մանուշյանի հուշերը՝ Manouchian. Editions Sociales, Paris, 1973 Այն կարելի է լրացնել ինտերնացիոնալ շրջանների և Մանուշյանի գործին առնչվող բազմաթիվ նյութերով։

դրականության մասին, որտեղ մշտապես բանավեճ է մղվում նրանց դեմ, ովքեր չեն պատկանում «առաջադիմականների» դասին[4]։

Ֆրանսահայ համայնքին հատկապես բնորոշ է բազմաթիվ դրական պարբերականների առկայությունը։ Պատճառը, անշուշտ, դեռևս Առաջին աշխարհամարտից առաջ Փարիզի ունեցած՝ հայ քաղաքական ու մտավոր օջախի դերն է, ինչպես նաև ֆրանսիական մշակույթի ու դրականության ազդեցությունը Օսմանյան կայսրության հայերի հոգևոր դաստիարակության վրա, որի լավագույն օրինակը, ինչ խոսք, Չոպանյանի «Անահիտ» հանդեսն է։ 1920-ական թվականներին եղեռնից փրկված մոտ վաթսուն գրող ու բանաստեղծ և որոշ թվով կոմկասցիներ հանգրվանում են Փարիզում և զարկ տալիս մշակութային կյանքին։ Այդ են վկայում մամուլն ընդհանրապես, գրական մամուլը մասնավորապես, ինչպես նաև մեկ ու կես տասնյակ տպարաններում լույս տեսած հազարավոր հայերեն երկերը։ 1930 թ. Հրանտ Սամուելյանը (1891—1977) Լատինական թաղամասի կենտրոնում (Մըսյո Լը Պրենս փողոց, 51) բացում է «Արևելյան գրախանութ», գնելով Կոստանդնուպոլսի՝ Բալենցին պատկանող հայկական գրախանութի ֆոնդերը։ «Արևելյան գրախանութը» այսօր էլ գոյություն ունի (Հ. Սամուելյանի զավակները շարունակում են հոր գործը)։ Հ. Սամուելյանը, ծննդյամբ Կիլիկիայից, պատերազմից առաջ խմբագրում էր Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթը։ 1920 թ. գնում է Փարիզ։ Այստեղ 1925-ից աշխատակցում է «Հառաջին», իսկ 1957-ին՝ Շավարշ Միսակյանի մահից հետո, դառնում խմբագրականների հիմնական հեղինակը՝ դրսևորելով հրապարակախոսի և պատմաբանի ձիրք։ Զուգահեռաբար ծավալում է քաղաքական կարևոր գործունեություն, լինելով դաշնակցական կուսակցության անդամ, որտեղ զբաղեցնում է պատասխանատու պաշտոններ Արևմտյան Եվրոպայի Կենտրոնական կոմիտեում և Համաշխարհային գրասենյակում։ Կատարել է Հայկական հանրապետության վտարանդի պատվիրակության ղեկավարի պարտականությունները[5]։

Գրական մամուլի աննախադեպ աշխուժացումը սկսվում է 1926 թ., երբ լույս է տեսնում «Արագածը», որն ընդվզում է պատերազմից և եղեռնից հետո ավագ սերնդին բնորոշ «ամլության» դեմ։ Շուտով կազմակերպվում է նաև գրական կյանքը՝ շնորհիվ նույն թվականին ստեղծված «Հայ գրողների միության», որի «Հարդագող» հանդեսը գոյատևում է մինչև 1928 թ.։ Միությունը կազմակերպում է շաբաթական հավաքույթներ, որտեղ ընթերցվում են անտիպ էջեր, երիտասարդ գրողների գործեր։ 1929 թ. հիմնվում է «Հայ դրական ակումբը», որտեղից էլ ըստ երևույթին ծագում է «Նահատակված գրողների բարեկամների ընկերակցությունը», որը 1930—1956 թթ. հրատարակում է ջարդերի ու տեղահանությունների ժամանակ զոհված գրողների հազվադեպ կամ սպառված գործերը։ Վ. Կաքավյանի (Վիկտոր Գարդոն, 1960-ականներին լույս տեսած ինքնակենսագրական նշանակալի եռագրության հեղինակը) «Ցոլք» հանդեսը (Փարիզ, 1928) հակվում էր դեպի ձախ ուժերը։

«Հների» քննադատությունը, ընդվզումը հայրերի և նախկին արժեքների դեմ, որ բնորոշ է բոլոր դրական շարժումներին, հայկական պայմաններում ստանում է առանձնահատուկ շեշտ, նկատի ունենալով, որ նախնիները և հայրերը անհաջողության են մատնվել, չեն կանխատեսել կամ չեն կարողացել խուսափել ցեղասպանության արհավիրքից, ձախողել են ազգային ծրագիրը։

Հրանտ Պալույանի «Ջվարթնոցը» (Փարիզ, 1929—30) նոր սերնդի առաջին հանդեսներից է, որը ձգտում է պահպանել հայկական ոգին, միաժամա-

[4] Խորհրդային մամուլի մասին տե՛ս C. Mouradian, L'Arménie Soviétique et diaspora. In Les temps modernes, dossier "Arménie-diaspora, mémoire et modernité", juillet-août-septembre. 1988.

[5] Հ. Սամուելյանի մահվան առթիվ լույս տեսած «Հայաստան» օրաթերթի հատուկ համարից զատ կարելի է հիշատակել նրա խմբագրականների ժողովածուն՝ «Օրվան խոսքեր», «Հառաջ», Փարիզ, 1983։

նակ բաց մնալով ֆրանսիական և համաշխարհային մշակույթի առջև։ Այստեղ կարելի է գտնել հոդվածներ ֆրանսիական նոր թատրոնի, Պոլ Վալերիի պոեզիայի, Վագների օպերաների, ռուսական բալետի և այլ նյութերի շուրջ։ Զոպանյանը դեռևս 1929 թ. վերսկսել էր «Անահիտ» հանդեսի հրատարակությունը, որն ավելի պահպանողական էր և ամենաերկարակյացը։

Բայց, անշուշտ, երիտասարդ սերնդի լավագույն արտահայտիչը «Մենք» հանդեսն էր։ Նրա հրատարակությունը երկար չի տևում. հինգ համար 1931 թ. ապրիլից 1932 թ. հոկտեմբերը, ընդհանուր առմամբ 280 էջ, բայց շատ կարևոր դեր է խաղում։ Հանդեսի ներածական խոսքը մանիֆեստի անտիթեզ է և արտահայտում է այսպես կոչված «Փարիզի դպրոցի» մտահոգությունները, մի սերունդ, որն Արևմուտքի փորձության միջով անցնում է միանգամայն տարբեր պայմաններում, քան նախորդ սերունդը, բախվելով աքսորված ժողովրդի գոյատևման կարևորագույն խնդրին։ Խոսքը վերաբերում է թույլ ուրվագծվող մի խմբի՝ մոտ տասներկու գրող, որոնք չունեին ընդհանուր գաղափարախոսություն, որ տեղիք էր տալիս բազմաթիվ տարաձայնությունների։ Բայց նրանց միավորողը, «ազգային զգացմունքների» գրականության ժխտումն էր, վտարանդի ժողովրդի գոյատևման գեղագիտական հիմնավորումը։ Ֆրանսիական հասարակության մեջ ամենաճանաչվածը, իհարկե, Շահան Շահնուրն է՝ երկլեզվյան գրող, որն Արմեն Լյուբեն անվան տակ եղել է «Նուվել ռըվյու ֆրանսեզի» հեղինակներից։ 1930-ական թվականներին գրական կամ մշակութային հանդեսները ավելանում են. «Կյանք և արվեստ» (Փարիզ, 1931—39), «Վեմ» (Փարիզ, 1932—39, խմբագիր՝ Սիմոն Վրացյան), «Մշակույթ» (Փարիզ, 1935—37, խմբագիր՝ Սեմա)։ Ընդհանուր առմամբ, այս հանդեսներն ունեին սահմանափակ տպաքանակ և համեմատաբար կարճ կյանք, որ բացատրվում է մշտական ֆինանսական դժվարություններով[6]։

Օրաթերթերի և հանդեսների մեծ մասը պատերազմի ընթացքում անհետանում է, քանի որ այդ սերունդը մեկնում է ռազմաճակատ, հարում Դիմադրությանը կամ լռում։ Կարելի է ընդամենը 3—4 անուն տալ, այդ թվում՝ ընդհատակյա հանդեսների, ինչպես Շավարշ Միսաքյանի «Արածանին» (Փարիզ, 1943—44), ալմանախների կամ գրական ժողովածուների։ Այնուհետև, համայնքի աճող ուծացման պատճառով մտավոր մթնոլորտը փոխվում է, սրան զուգահեռ նկատելիորեն ընդգծվում է երկբևեռացումը, կապված խորհրդային Հայաստանի ու նրա ռեժիմի արդարացիության վերաբերյալ եղած դիրքորոշումների հետ։

1945 թ. վերսկսվում է «Հառաջի» հրատարակությունը, որ Շավարշ Միսակյանը դադարեցրել էր օկուպացիայի սկզբից ի վեր։ Երևան են գալիս նոր պարբերականներ՝ կապված հաղթանակից հետո Հայկական հարցի աշխուժացման, Թուրքիայում գտնվող տարածքների խնդրի և Խորհրդային Հայաստան վերադառնալու խնդիրների հետ։ Գրական տեսակետից հետպատերազմյան շրջանի ամենանշանակալի իրադարձությունը, անշուշտ, «Անդաստանն» է (Փարիզ, 1952—69), որը Բյուզանդ Թոփալյանի շուրջն է համախմբում հայ մշակույթին նվիրված բանաստեղծների, նկարիչների, արվեստաբանների։ Լույս են տեսնում քանիից ավելի պատկերազարդ, երբեմն երկլեզու համարներ, որոնք բաց էին բոլոր հոսանքների, նաև ֆրանսիական մշակույթի առջև։

1970-ից 1980-ի միջև հայ գրականության հրատարակումը շարունակվում է «Հառաջի» սյունակներում, մասնավորապես, նրա ամենամսյա «Միտք և արվեստ» (Փարիզ, 1976-ից) գրական հավելվածում, ինչպես նաև 1980 թ. Մարկ Նշանյանի հիմնած «Կամ» (Փարիզ) հանդեսում, որը ներկայումս Արևմտյան Եվրոպայի բացառապես միակ գրական հայալեզու պարբերականն է։ Ինչպես հեղինակային, այնպես էլ թարգմանական գործերով այս հանդեսը

---

[6] Երկու պատերազմների միջև լույս տեսած գրական մամուլի մասին հիմնական աղբյուրն է K. Peladian, P eix on Ro nn-on sauve du naufrage համապարփակ հոդվածը Les temps Modernes dossier "Armenie diaspora" մեջբերված գործում:

խական մարտակոչ է հանում լեզվի գոյատևման։ Նախաձեռնողն արդեն ֆրանսահայ երրորդ սերնդի ներկայացուցիչն է...

Համայնքի կյանքը կազմակերպող պարբերականների թվում կարելի է հիշատակել Ֆրանսիայում ապաստանած հայ գաղթականների երկամսյա, այնուհետև ամենամսյա հանդես «Օջախը» (Փարիզ, 1928—32), «Հայ արին» (Փարիզ, 1929—35) և շատ ուրիշներ։

Մասնավոր տեղ ունի բավական ինքնատիպ **բժշկական մամուլը**: 1920-ական թվականներից մինչև մեր օրերը լույս են տեսել գրեթե շարունակաբար «Բուժանք» (Փարիզ, 1926—30), «Առողջապահական, գիտական և հասարակական ամսագիր», «Արձագանք ճշմարտության» (Փարիզ, 1928—31) «Բարոյական, կրոնական և բժշկական ամսագիր», «Առողջ կյանք» (Փարիզ, 1930), «Բժշկական ամսագիր», «Հայ բուժ» (Փարիզ, 1934—1969) պարբերականները։ Այս վերջին հանդեսը լույս է ընծայվել «Հառաջի» տպարանում և խորհրդանշում է «լուսավորության» դարաշրջանի ավանդույթը պահպանելու ձգտումը։ Այստեղ զետեղվել են գիտական և բժշկական հանրամատչելի հոդվածներ, նյութեր՝ նվիրված հայ ժողովրդական բժշկությանը, բժշկության պատմությանը և այլն։ 1975—76-ից հրատարակվում է «UMAF»-ը՝ ֆրանսահայ բժիշկների միության ընդհանուր, բժշկական, գիտական և մշակութային տեղեկատվության եռամսյա հանդեսը, որը լույս է տեսնում ֆրանսերենով և շքեղ ձևավորումով։ Ֆրանսահայ մամուլի ավելի մասնագիտացած դրսևորումներից մեկը **համալսարանական մամուլն** է: Այս առումով ևս Ֆրանսիան գրավում է առանձնահատուկ տեղ ունենալով իր տեսակի մեջ սփյուռքահայ առաջին և եզակի „Revue des Études Arméniennes" հանդեսը (ԱՄՆ-ում գիտական մամուլ երևան էր գալու միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո)։ Այդ օրգանը պատկանում էր «Հայասիրական ուսումնասիրությունների ընկերությանը», որը հիմնվել էր 1920 թ. հունվարին՝ անկախ հանրապետության ժամանակաշրջանում (մայիս, 1918—դեկտեմբեր, 1920), ճիշտ այն պահին, երբ Հաշտության կոնֆերանսը քննարկում էր հանրապետությունը ճանաչելու հարցը։

„Revue des Études Arméniennes" հանդեսի խմբագրական կոլեգիան ընդգրկում էր հայագետ համալսարանականների և հետազոտողների, ժամանակի ճանաչված արևելագետների և բյուզանդագետների, որոնց մեջ էին Արևելյան լեզուների ինստիտուտի տնօրեն Պոլ Բուայեն, Սորբոնի բյուզանդագիտական ուսումնասիրությունների պրոֆեսոր Շառլ Դիելը, Հին արևելքի արվեստի մասնագետ Գաբրիել Միլեն, Ակադեմիայի անդամ, Ֆրանսիայում բյուզանդագիտական հետազոտությունների հիմնադիր Գյուստավ Շլումբերժերը և հատկապես Կոլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր, հնդեվրոպական համեմատական լեզվաբանության և քերականության ականավոր մասնագետ Անտուան Մեյեն (1866—1936)։ Նրա ամենահայտնի աշակերտները՝ Ռ. Պ. Մաքլերը և Ֆ. Մակլերը նույնպես մասնակցում են ընկերության և հանդեսի հիմնադրմանը՝ այս գործում ներդնելով մեծ եռանդ։ Նույնը վերաբերում է Սիրարփի Տեր-Ներսեսյանին, որ հայ արվեստի, մասնավորապես, ձեռագրերի խորագետ ուսումնասիրող էր։ Հանդեսն ունի երկու թողարկում. առաջինը՝ 1920-ից 1933-ը, տարեկան երեք պրակով և երկրորդը՝ սկսած 1964 թ.՝ տարեկան մեկ հատորով։

«REA»-ի առաջին թողարկումը հիմնականում նվիրված էր լեզվաբանության և ավանդական հայագիտության հարցերին (պատմություն, հնագիտություն, արվեստ և այլն), կային նաև «խառը» տեղեկություններ և ժամանակի քաղաքական խնդիրներն արծարծող նյութեր (միջազգային դրություն, գաղթականների խնդիր, խորհրդայնացում և խորհրդային Հայաստան)։ Միանգամայն այլ է պատկերը նոր թողարկման մեջ, որը սկիզբ է առնում 1964 թ. Մեյեի աշակերտ Ժորժ Դյումեզիլի նախաձեռնությամբ։ Նա նույնպես համեմատական լեզվաբանության և հատկապես կրոնների պատմության մասնագետ էր։ [illegible] խորապես [illegible] բնույթ ունի և հայագիտական հար-

ցերն արծարծում է ժամանակագրական խիստ շրջանակներում՝ XVIII դ. ոչ ուշ[7]։ Սփյուռքի սկզբնավորման ու կազմակերպման ժամանակաշրջանից և Երկրորդ համաշխարհային պատերազմի ցնցումներից հետո հայերին, թերևս, նոր հնարավորություն է տրվում, քանի որ ծագում է Թուրքահայաստանի հարցը և սկսվում «հայրենադարձության» արշավը։ Ավելի քան 100000 սփյուռքահայեր, որոնցից 7000-ը Ֆրանսիայից, մեկնում են Երևան, հույս փայփայելով, թե այստեղից կգնան իրենց հայրենիքը՝ Արևմտահայաստան կամ գոնե կապրեն հայկական երկրում։

Ֆրանսիայի հայ համայնքում սկսվեցին նոր պրոցեսներ, որոնք ընթանում էին ասպնջական հասարակության հետ առավել սերտ կապերի, ֆրանսիական քաղաքացիության ընդունման, խառն ամուսնությունների և սեփական լեզվի գործածությունը կորցնելուն զուգահեռ։

Եթե «Հառաջը» արդեն 1945-ին սկսում է վերահրատարակվել և մնում է կենսունակ օրաթերթ, եթե հիմնվում կամ վերստեղծվում են քաղաքական կամ ընկերակցական ուրիշ պարբերականներ (մասնավորապես, քաղաքական տարբեր հոսանքների պատկանող երիտասարդական օրգաններ), ապա դրանց թիվը (40 տարում մոտ 50 անուն՝ նախորդ 20 տարիների 120 անվան դիմաց), կարճատև կյանքը և հատկապես սահմանափակ ազդեցությունը, տարբեր օրգանների միջև մղվող բանավեճերի դադարումը, ընթերցողների նվազումը, աճող երկլեզվայնությունը, եթե չասենք ամբողջական ֆրանսիականացումը, արտացոլում են համայնքի էվոլյուցիան դեպի ուծացում։ Սակայն 1960-ականներից սկսած կարելի է նշել որոշակի շրջադարձ դեպի ազգայինը, որին զարկ է տալիս 1915 թ. ցեղասպանության հիսնամյակը։

1965 թ. ապրիլի 24-ին այդ տարեթվի նշումը առիթ է դառնում, որպեսզի առաջին անգամ տեղի ունենան միասնական ցույցեր սփյուռքահայ բոլոր համայնքներում և Խորհրդային Հայաստանում։ Այդ շրջադարձը բացատրվում է նաև այլ գործոններով. ասպարեզ էր իջել երրորդ սերունդը, որն ավելի կրթված էր, ավելի մերված, այլևս նյութապես գոյատևելու հոգս չուներ և ոգեշնչված էր ապագաղութացման ու ազգային-ազատագրական շարժումներով, «էթնոսի» շահերով, գաղափարախոսությունների վերարժեքավորմամբ։ Սրան պետք է ավելացնել համայնքի պարբերական «վերահայացումը», երբ հաջորդական ալիքներով իրենց երկրներում ծագող ճգնաժամերին համընթաց՝ ժամանում էին նոր հայ գաղթականներ Ռումինիայից, Բուլղարիայից, Սիրիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Իրանից և վերջապես Խորհրդային Հայաստանից, շնորհիվ այն բանի, որ հետստալինյան «ձնհալը» կիսաբաց էր արել ԽՍՀՄ դռները։ Հաջորդ փուլը լինելու էր «զինված պայքարի» տասնամյակը, երբ 1975—85 թթ. բարձրացավ ահաբեկչության ալիքը, որպեսզի խորտակի լռության պատը։

Դժվար և պատասխանատու գործ է 1945 թ. հետո լույս տեսած հայկական մամուլի բոլոր անունները թվարկելը։ Քիչ թե շատ լիարյուն կերպով ներկայացված են հայ քաղաքական հին ու նոր կարևորագույն հոսանքները (դաշնակցական, ռամկավար, հնչակ, համայնավար, անկախ, ձախ), կան տեղեկատու ամփոփագրեր կամ բյուլետեններ, որ ավելի կամ պակաս պրոֆեսիոնալիզմով թողարկել են Հայ մշակույթի տները, հայրենակցական և նախկին շրջանավարտների միությունները, հարանվանությունները (բողոքական, կաթոլիկ)։ 1985 թ. փետրվարին Դաշնակցություն կուսակցությունը ձեռնարկեց Երկրորդ օրաթերթ ունենալու փորձ։ Այն կոչվում է «Կամք» (Փարիզ, կու-

---

[7] Բարձրագույն գործնական դպրոցի (EPHE) և «Հայագիտական ուսումնասիրությունների հանդեսի» տնօրեն Ժ.—Պ. Մահեն մեզ ընձեռել է տեղեկություններ այդ հանդեսի պատմության մասին, իսկ Ռուանի համալսարանի դասախոս Շ. դը Լամբերտըրին՝ տվյալներ Մեյեի գործի մասին։

սակցության ֆրանսիական հատվածի օրգան)։ Ներկայումս գոյություն ունի շուրջ քսան անուն պարբերական[8]։ Պետք է նշել հայ մամուլը կյանքի կոչելու և բարձրորակ պարբերականներ ունենալու համառ ջանքերը։

Լիոնում «Ֆրանս-Արմենին»՝ «Ֆրանսահայերի ամսաթերթը», որ 1982-ից հրատարակում է դաշնակցական հոսանքին մոտ կանգնած Հայ դատի պաշտպանության կոմիտեն, ընտրել է լայն ասպարեզ և գովազդների միջոցով ինքնաֆինանսավորվելու ուղին, որ նրան թույլ է տալիս այսօր ունենալ 21000 տպաքանակ։ Այն տարածվում է անվճար՝ նախ, Կենտրոնական Ֆրանսիայի, ապա և Փարիզի, Մարսելի, Շվեյցարիայի հայության մեջ կամ՝ կամավոր, բաժանորդագրության հիմունքներով։ Ֆրանսիայում և նույնիսկ ողջ սփյուռքում լույս տեսնող հայկական թերթերի մեջ դա, անկասկած, ամենամեծ տպաքանակն է։

„France Armenie »-ն ֆրանսերեն է (մի քանի հայերեն էջերը 1987 թ. հունիսից հանվել են), հասցեագրված է ավելի լայն հասարակությանը։ Անդրադառնում է Հայ դատի զարգացման միտումներին, սփյուռքին և Հայաստանին առնչվող պատմական իրադարձություններին, տպագրում գրական, գեղարվեստական, կինեմատոգրաֆիական և այլ մեկնաբանություններ, գրախոսություններ և այլն։ Նյութերը համեմատաբար հակիրճ են շարադրված, մատչելի ոճով, առանց խրթին մտքերի, պարզ, բայց ամենևին ոչ պարզունակ։ Օրաթերթը նպատակ ունի հանրաճանաչ դարձնել Հայկական հարցը և հայերին համախմբել համընդհանուր հավանության արժանի ծրագրերի շուրջ, որպիսիք են 1915 թ. Եղեռնի ճանաչումը և ազգային իրավունքները։

„Cahiles armenies ...“ (5 համար՝ սկսած 1986 թ.) պարբերականի հրատարակիչն է Հայկական փաստաթղթերի և հետազոտությունների կենտրոնը (CRDA, Փարիզ), որն օգտվում է Մշակույթի մինիստրության ֆինանսավորումից։ Այստեղ շատ գրավիչ կերպով ներկայացվում են հոդվածներ հայ մշակույթի և պատմության շուրջ, համայնքների կամ նշանավոր մարդկանց դիմանկարներ, գրական-քննադատական և այլ նյութեր, և այս ամենը՝ «պատկառելիությունը» և քաղաքական «չեզոքությունը» պահպանելու որոշակի մտահոգությամբ, որպեսզի արձագանք գտնի հայ կամ ֆրանսիական հասարակայնության կրթված և հայասեր շրջաններում։ Սակայն ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ հայ համայնքը պետք է օգտվի արտաքին, ֆրանսիական պարբերականներից, եթե ուզում է տեղ հասցնել իր խոսքը, գտնվել օտարների տեսադաշտում, ապացուցել գոյատևելու իր իրավունքը։

1950-ական թվականներից որոշակի թվով, հատկապես, ձախ պարբերականներ հայերին ընձեռում են իրենց հովանու ներքո հանդես գալու հնարավորություն՝ թողարկելով հատուկ համարներ, որոնք ամենից հաճախ պատրաստում են հայերին հայ մշակույթին, պատմությանը, մանավանդ Հայկական հարցին ծանոթացնելու նպատակով։ Բայց այսուհետև, ի տարբերություն «Պրո Արմենիայի» ժամանակների, նշանակետը, թերևս, ոչ այնքան ֆրանսիական հասարակական կարծիքն է, որքան ինքը՝ հայ համայնքը, որն ավելի մեծ ուշադրություն է դարձնում պարբերականի որակին ու համբավին, քան բովանդակությանը։

8 Հիմնականների թվում բացի երկու օրաթերթից՝ «Հառաջ» (անկախ) և «Կամք» (դաշնակցական) հարկ է նշել. «Հայաստան» (երկամսյա հանդես, ՀՀԴ—նոր սերնդի օրգան, դաշնակցական), համայնավարական օրաթերթեր «Աշխարհ» (Փարիզ), „Tra·d d'Union" և „Notre voix". հնչակյան օրգան «Հաղթանակ» (Փարիզ), ձախ հանդեսներ "Hay Baykar" (Փարիզ) և "Liberation armén·enue" (Ալֆորվիլ), որոնց հրատարակությունը դադարել է վերջերս, ամսագիր „Armenia" (Մարսել), «Ազատ-հանդես» (Գրենոբլ), «Հայ եկեղեցի» (կաթոլիկ, Փարիզ), բողոքական պարբերականներ՝ «Բանբեր» և "Le lumignon", ռամկավար թերթեր «Շինարար» և «ԱԴԼ»՝ չհաշված սույն հոդվածում ավելի մանրամասնորեն քննարկվածները („Revue des Etudes Armenienne" „UMAF", [illegible], „France-Armenie", „Cahier Armenie[n] Ani"): Այս պարբերականների մեծ մասը երկլեզու է կամ ամբողջովին ֆրանսերեն։

Վերոհիշյալ հատուկ համարների թեմաները դիտարկելիս՝ կարելի է սահմանել Հայկական հարցի աշխուժացման փուլերը, ինչպես նաև նրա հանդեպ ունեցած դիրքորոշման աստիճանական փոփոխությունը։ 1950 թ. «Cahiers du Sud»-ը (№ 299) մի ամբողջ համար է նվիրում «Հայ տրուբադուրին», որը պատրաստել էր հայ դրականության թարգմանիչ Լյուկ-Անդրե Մարսելը։ 1961 թ. փետրվար և մարտ ամիսներին խորհրդային Հանրապետության հայ գրականության 40-ամյակի առթիվ «Europe»-ն լույս է ընծայում նվիրված համար։ «Esprit» պարբերականի 1967 թ. ապրիլի համարը թեև նվիրված չէր հայկական թեմային, բայց գլխավոր հոդվածը վերաբերում էր Հայկական հարցին։ Հեղինակը՝ Անահիտ Տեր-Մինասյանը, այստեղ առաջին պլանի վրա էր մղում հարցի քաղաքական վերլուծությունը։ 1982 թ. դեկտեմբերին Միացյալ Սոցիալիստական Կուսակցության տեսական ամսագիր „Critique Socialist“-ը (№ 44) ներկայացնում է հատուկ համար «Հայեր. ցեղասպանությունից մինչև պայթյուն» վերնագրով։ 1984 թ. ապրիլին «Esprit» այս անգամ մի ամբողջ համար է լույս ընծայում՝ վերնագրված՝ «Հայաստան. հիշելու իրավունք»։ Նույն թվականին „Les temps modernes» Թուրքիային նվիրված դոսիեում զետեղվում է Ա. Տեր-Մինասյանի «Պահանջատիրության շարունակությունը» հոդվածը։ Վերջապես, 1988 թ. ամռանը «Les temps moderne»-ը տպագրում է ամբողջությամբ հայերին նվիրված համար-դոսիեն՝ «Հայաստան-սփյուռք. հիշողություն և արդիականություն» խորագրով, որի նախաձեռնողներն էին Ժերար Շալիանը և Հայ մշակութային կոմիտեն։

Գորբաչովյան «ձնհալի» հետևանքով Խորհրդային Հայաստանում ծավալված ազգային և դեմոկրատական լայն շարժումը ապշեցրել է Սփյուռքը, որը գնալով ավելի էր «տեղավորվում» և աստիճանաբար կորցնում իսկական քաղաքական պայքարի զգացումը, ազգային հարցերի լուծման գործում ապավինելով Խորհրդային Հայաստանին, նիրհելով նրա նվաճումները թմբկահարող ճառերի ներքո։ Եթե մինչ այժմ համայնքը, կարելի է ասել, համեմատաբար քիչ է համախմբվել ի պաշտպանություն խորհրդային հայերի հատկապես ազատության ու դեմոկրատիային վերաբերող պահանջների, ապա մամուլը արդիականության ճնշման ներքո ստացել է որոշակի լիցք և կատարում է իր հիմնական ֆունկցիան՝ տեղեկացնել և վերլուծել ազգին առնչվող իրադարձությունները և ոչ թե պարզապես պահպանել ազգային ինքնագիտակցության ու պատկանելության զգացումը։ Հայերին ճանաչելու և հասկանալու ձգտումը, որն իր գագաթնակետին հասավ 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի ժամանակ, ինչպես նաև ներկայումս դիտվող նրանց վերահամախմբումը, թերևս, սփյուռքահայ մամուլի նոր կենսունակության գրավականն են։

АРМЯНСКАЯ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ ФРАНЦИИ

К. Л. МУРАДЯН

Резюме

Со второй четверти XIX в. Париж становится центром армянской культуры и движения политического возрождения. Во французской столице зарождается армянская периодическая печать, основываются типографии. Одним из первых периодических изданий в Париже были «Մասյաց աղավնի» («Голубь Масиса») Г. Айвазовского (1855—1858) и «Արևելք» «Восток» Ст. Восканяна (1855—1856).

До наших дней во Франции вышло в свет более 200 изданий. Они отражали и по сей день отражают важные стороны политической и духовной жизни армян. На страницах современной армянской периодической печати Франции освещается жизнь армянской колонии и ее духовные связи с родиной—Республикой Армения.